

“ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ.” ՂՈԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԻԶ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՕԳՈՍՏՈՍ 1, 1897

ԹԻԻ 8



ԲՆԱՅՈՂ ՄԱՆԿԻԿ ԵՒ ԱՆՈՐ
ՓՈՒՔՐԻԿ ԲՈՅՐԸ

Այս փոքրիկ աղջիկը որ խաղ կը սիրէ մեր բոլոր փոքրիկ բարեկամներուն պէս, իր աւելի փոքրիկ եղբորը քով թողուած է: Արտին մէջ մանկիկին քունը տարած է, և աղջիկը պէտք է որ անոր քովը սպասէ մինչև որ արթննայ կամ մայրը դայ: Տեսէք, մէկ ձեռքով իր փոքրիկ եղբայրը կը պաշտպանէ, և միւս ձեռքով կը զսպէ իր ուրիշ տեղ երթալու փախաբք: Սիրելի զաւակներ, դուք ամէնքդ ալ կատարելու պար-

տականութիւններ ունիք, և ամէնքդ ալ կ'ուզէք խաղալ զուարճանալ: Չեր պարտականութիւնները կատարելուն մէջ դտէք ձեր զուարճութիւնը և երջանիկ պիտի ըլլաք: Թողէք պարտականութիւնը և զուարճութեան ետեւ ինկէք, և ահա այն ատեն ճշմարիտ երջանկութիւնը անշուշտ պիտի փախչի ձեզմէ: Խաղաղութեան և ուրախութեան ճամբան այն է զոր Աստուած ցուցած է ձեզի, որպէս զի անկէ քարէք:



“ԻՆՉՈ՞Ւ ՏՈՒՈՐ ԵՍ, ՈՒՐԵՄՆ”

Փողոցները ձգուած փոքրիկ աղջիկ մը հիւանդանալով շննդեան տօնի մը ատեն, հիւանդանոց տարուեցաւ: Երբ հոն կը գտնուէր, լսեց Յիսուսի մեզ փրկելու համար աշխարհ գարուն պատմութիւնը: Բոլորովին նոր էր իրեն համար այդ պատմութիւնը և շատ հաճոյք զգաց անկէ: Կարող եղաւ այդ աղջիկը հասկնալ այն զարմանալի փրկչին արժէքը, և անոր վրայով ստացած լուրով երջանիկ եղաւ մինչև կը պառկէր հիւանդանոցին մէջ իր փոքրիկ անկողին վրայ:

Օր մը երբ հիւանդապահ կինը եկաւ անոր քով սովորական ժամունք, աղջիկը բռնեց անոր ձեռքէն և սապէս շնչեց, «Ես շատ զուարթ ժամանակ կ'անցընեմ հոս, երջանիկ ժամանակ: Կը յուսամ թէ քիչ ատենէն բոլորովին աղէկնալով պիտի ելլեմ ասկէ, բայց երբեք պիտի չմոռնամ հոս անցուցած երջանիկ ժամանակս: Յիսուսի ծննդեան վրայով լրամ ես, դիտե՛ս թէ մեզ փրկելու համար աշխարհ եկաւ Աստուծոյ Որդին:» «Այո,» պատասխանեց հիւանդապահը, «դիտե՛մ, բայց լուռ թի՛ն, ալ մի խօսիր:» «Գիտես ուրեմն, ես չէի կարծեր թէ դիտես, ինչու որ չգիտցողի պէս կ'երևնաս, և քեզի պիտի պատմէի:» «Դնչո՞ւ. ես ի՞նչպէս կ'երևնամ որ...» իր քիչ մը առաջ լուռ կեանալու պատուէրը մոռնալով իր հե-


է: Աղքատութեամբ սկսաւ իր կեանքը: Բայց անկարօտ վիճակի բարձրացաւ իր մասնագիտութեան մէջ ունեցած նշանաւոր յաջողութիւններով: Յաճախ կ'ըսէր իր բարեկամներուն թէ միայն Աստուծոյ շնորհքն էին իր ձեռք բերած մեծ յաջողութիւնները: Եւ իր կատարած գործը ոչինչ կը համարէր բաղդատելով Աստուծոյ ընդունած օգնութեանը հետ: Եթէ Աստուած լիննէոսի օգնեց անոր քրիստոնէայ ըլլալուն համար, մեզի ալ կ'օգնէ տան մէջ, խանութի մէջ և մեր ձեռնարկած ամէն մէկ գործին մէջ՝ որպէս զի յաջողինք: Եթէ մեր առջև պահենք վերի առածը, «Ամեղովութեամբ ապրէ, Աստուած ներկայ է,» զերծ կրնանք մնալ շատ մը վիշտերէ և զղումներէ երբ տարւոյն վերջին հասնինք: Այդ ա-

կառքերով ալ: Բայց մանաւանդ սառե պալատ մը կը շինեն ամէն տարի: Խոշոր սառի կտորներ կ'առնեն փոխանակ քարերու, և աննոցով կը շինեն մեծ շէնք մը, պատերը շատ հաստատուն կ'ընեն աննոց վրայ ջուր թափելով որ կը սառի և մէկ կը տորի կը փոխէ շէնքը: Ետքը վրան երդիք կը շինեն, և այս միակտուր շէնքը պայծառապէս լուսաւորելով անոր մէջ պարահանդէսներ, նուագահանդէսներ և ուրիշ զուարճութիւններ կը վայելեն: Բայց զուարճութեան ամենէն մեծ միջոցը նոյն իսկ սառնեղէն պալատն է:



«ԱԶԱՏԵՅՔԻ ԶԱՆՈՆԻՔ ՄՕՐՍ ՀԱՄԱՐ»

«Երկու բազուկները պէտք է կտրել» Յաւալի արկած մը պատահած էր, և տղան որուն ուղղուեցաւ այս խօսքը, այդ արկածին զոհերէն մէկն էր: Երկու բազուկներն ալ զուսուռած էին, իսկ ինքը իր մօր միակ նեցուկն է: «Տոբ թոր», ըսաւ տղան, վայրկեան մը իր ճերմկած երեսը անձկութեամբ վերցնելէն ետքը, «զանոնք փրկելու կերպ մը չկայ»: «Կը վախնամ թէ չկայ: Անոնք գէշ կերպով ճմուռած և ջախջախուած են:» «Չկայ կերպ մը», նորէն հարցուց: «Կրնայ գրտնախ կերպ մը», ըսաւ բժիշկը վարանելով, «բայց շատ պիտի տանջուիս, և շատ հաւանական է որ վերջապէս կորնցնես երկուքն ալ:» «Մէյ մը փորձեցէք, Տոբ թոր», ըսաւ տղան անձկութեամբ, «և ես պիտի դիմանամ ցաւին: Պէտք է որ զանոնք ունենամ մօրս համար:» «Տղա, պիտի չկրնաս դիմանալ», ըսաւ երկրորդ վիրաբոյժ մը, վար նայելով անոր վրայ. «անօգուտ բան է փորձելը:»



տաքրքրութենէն: «Ո՛հ, ուրիշ շատերու պէս, տխուր: Ինչո՞ւ տխուր ես ուրեմն: Չէի կարծեր որ Յիսուսի ծննդեան վրայ դիտնալէ ետքը առանկ տխուր ըլլայիր:»

ուածը մեզ ուղղութեան մէջ առաջնորդող մշտնջենաւոր սանձ մըն է:



ՄՈՆՐԷԱԼ ՁՄԵՌՈՒԱՆ ՄԷՋ

Այս պատկերը Մոնրէալ քաղաքը չցուցներ ձմեռուան մէջ, այլ՝ ամառուան մէջ: Բայց կ'ուզենք քանի մը բան խօսիլ ձմեռուան Մոնրէալին վրայ: Մոնրէալ ֆանատայի ամենէն կարևոր քաղաքներէն մէկն է: Սբ. Լաւրենտիոս գետին վրայ է: Ունի 150,000 բնակիչ, Կաթողիկ մեծ մայր եկեղեցի մը և շատ մը ուրիշ շքեղ շէնքեր:

Չմեռը գետը կը սառի, և ամբալ քանակութիւնով պատուական սառ կը կտրուի անկէ ամառը գործածուելու համար Մոնրէալի և ուրիշ քաղաքներու մէջ:

Բնակիչները իրենց կլիմային ցրտութենէն օգտուելով՝ զուարճութեան շատ մը կերպեր գտած են: Ոչ միայն ճամբորդութիւն կ'ընեն սառած գետին վրայ բալիսերներով, այլ՝ շոգեշարժ

«Ազատեցէք զանոնք մօրս համար, եթէ կրնաք. ցաւին դէմ պիտի տամ», պատասխանեց տղան:

Քաջութեամբ համբերեց ցաւին օրէ օր, շաբաթէ շաբաթ, այնպէս որ զարմացան և հիացան բոլոր իրեն մօտ գտնուողները: Պարապը չգնաց իրեն քաջած ցաւը և համբերութիւնը, թէ պէտ ըսուեցաւ իրեն թէ երբեք կատարեալ կերպով պիտի չկրնար գործածել իր բազուկները:

«Բայց», ըսաւ տղան զուարթութեամբ, «տակաւին կարող պիտի ըլլան գործել մօրս համար:»


«Ես չեմ գիտեր թէ իմ բազուկներս գործած ըլլան մօրս համար», ըսաւ բարձրահասակ, տգեղ դէմքով

ԵՐԵՒԵԼԻ ՄԱՐԻՈՒ ՄԸ ԱՌԱՄԸ

Կ'ըսուի թէ Լիննէոս, Շուկտացի բուսաբանը և գիտունը, իր դրան վրայ դրած էր սա առածը, «Անմեղութեամբ ապրէ, Աստուած ներկայ է:»

Լիննէոս շատ աշխատասէր և գործունէայ մարդ մըն էր. և իր կեանքը նուիրեց երկրիս բոլոր ծանօթ բոյսերը և կենդանիները դասակարգելու և անոնց անուններ դնելու. և ասկէ զատ շատ մը գիրքեր գրեց բոյսերու, բնապատմութեան և գիտութեան վրայ: Բայց գիտէր թէ յաջողելու համար ո՛ւր նայելու էր, և համոզուած էր թէ մի միայն օգտակար կեանքը քրիստոնէական կեանքն

հիւանդ մը որ անոր քով կայնած էր : «Իրան տարի կ'ընէ որ հեռու կը գտնուիմ անկէ : բայց տեսնելով թէ դուն ամէն ցաւ և չարչարանք կրել յանձն առած ես մօրդ համար, ես ալ իմ մօրս վրայ խորհիլ սկսած եմ : Ո՛հ, ի՛նչ բարի և ազնիւ մայր մըն էր : Ես տուն պիտի դառնամ անոր քովը :»




«ԿԱՅ ՄԵԿԸ ՈՐ ԿԸ ՔԱՇԵ ՎՆԱՍՈՐ»

Ամերիկեան մեծ քաղաքի մը դեղագործներէն մէկը վերջերս սապէս ըսաւ, «Եթէ գործիս մէջ շոյտ և զգուշաւոր եմ, կը պարտիմ դասի մը զոր սորվեցայ երբ իբրեւ ասդին անդին զրկուող տղայ մըն էի այն տանը մէջ որուն տէրն եմ հիմա : Օր մը ճիշդ կէս օրին ինծի հրամայուեցաւ որ շիշ մը դեղ տանիմ հիւանդի մը : Բայց որովհետեւ անօթի էի, անսիջապէս չտարի, հապա կեցայ և կէս օրուան ճաշ ըրի : Հիւանդը դեղը այն ատեն չտարուեալուն համար շուտով ինկաւ, և քանի մը օրէն մեռաւ : Կը զգայի թէ անոր սպանիչը ես եղայ : Այդ պատճառաւ կրած ներքին տագնապս պատճառ եղաւ մարդ ըլլալուն : Սորվեցայ թէ մեր ամէն մէկ անհոգութեան կամ սխալ արարքին համար, թէպէտ շատ փոքր, կայ մէկը որ չարիք կը կրէ : Այս օրէնքը աւելի սուսկայի կու գայ ինծի, վասն զի միշտ սխալ գործողն ինքը չէ որ վնաս կը կրէ :

Այս օրէնքը սովորաբար կ'անգիտանան դեռահասակները : Անհոգութիւնը կամ անձնասիրութիւնը չնչին բաներ են, ի՛նչ վնաս կու գայ անոնցմէ : Երևութապէս վնաս մը չգար ընողին, որ ուրախ զուարթ իր գործին կ'երթայ, բայց կայ մէկը որ կը քայլէ վնասը : Դեռատի աղջիկ մը, խօսք ըլլալու համար, առանց խորհելու դատարկաբանութիւն մը կ'ընէ զոր կը մուռայ յաջորդ վայրկեանին, բայց երկար ատեն ետքը այն կինը որուն վրայ զրպարտութիւն խօսած էր այդ դատարկաբանութեամբ, կը տեսնէ որ իր բարի անունը արատաւորուեր է աղջկան այն թունաւոր շնչիւնով : Պատանի մը որ գինի գործածելու սովորութիւն ունէր, անգամ մը ուրիշ ընկերի մը պատահած ատեն կը համոզէ զանիկա որ իմէ իրեն հետ, իբրև հիւրասիրական պատիւ մը, կամ հակառակ բան մը ըրած ըլլալու համար ժուժկալութիւն քարոզողներուն, զորոնք «մոլեռանդ» կը կոչէր : Ինք իր ճամբան կ'երթայ,

բայց այն պատահական հիւրը խնուրքի կը սովորի և կը շարունակէ խմել, մինչև որ անոյս արբեցող մը և ցաւազար մը կ'ըլլայ : Այս ճամբարութիւնը հետագայ կերպով հասկցուցած են փորձառու անձինք :

«Գամ մը չկենալուն համար պայտը կորսուեցաւ, Պայտը չկենալուն համար հեծեալը կորսուեցաւ, Հեծեալը չկենալուն համար լուրը կորսուեցաւ, Լուրը չկենալուն համար ճակատաւ մարտը կորսուեցաւ :»



ՄԻՒՍԻՈՆ

Հին ժամանակներէ հետէ և շատ երկիրներու մէջ կը գտնուի մասնաւոր արուեստ մը միւսին (Կուլտ) կոչուած, որ է զանազան գոյներով մարմարիններ կամ մանաւանդ յատկապէս պատրաստուած գունաւոր սպակիի կտորներ իրար բերելով պատկերներ ձևացնել : Շատ մը համբաւաւոր եկեղեցիներ, զոր օրինակ՝ Կոստանդնուպոլսոյ մէջ Այա Սոֆիա, որ ա-

ռաջ եկեղեցի էր և հիմա մզկիթ է, և Հռոմայ մէջ Սուրբ Պետրոս, զարգարուած են այս տեսակ պատկերներով, որոնց մէկ օրինակը այս երեսին վրայ կը տեսնէք :

ՏՐՏՈՒՆՁ ԵՒ ԳԱՆԳԱՏ

Ո՛րչափ մարդիկ կան որ միշտ կը գանգատին բանի մը համար : Կը պատմուի մէկու մը վրայ թէ երբ իրեն հարցուեցաւ ուրիշի մը առողջութեան վրայով, պատասխանեց թէ «Կը գանգատի քիչ մը աւելի աղէկ ըլլալուն համար :»

Գանգատելու այս ունակութիւնը մնայուն կ'ըլլայ : Մարդիկ կը գանգատին հովէն, կը գանգատին օդէն, կը գանգատին իրենց գործէն, կը գանգատին իրենց ընդունած վարձքէն, կը գանգատին իրենց տուներէն, կը գանգատին իրենց բարեկամներէն : Բանէ մը գոհ չեն, բանէ մը հաճոյք չեն զգար : Եւ երբ ա՛լ կը հասնին գանգատելու առիթ եղող բաները, երբ ո՛չ ցաւ ունին, ո՛չ վիշտ, ո՛չ նեղութիւններ կամ ճախորդութիւններ, և կը հարցուի իրենց թէ ի՛նչպէս են, կը պատասխանեն հաւանօրէն, «Ձեմ կրնար գանգատիլ :» Իբր թէ հասկցընել ուզելով թէ իրենք գանգատած են որչափ որ կրցած են գանգատիլ, և կ'ուզեն գանգատիլ եթէ գանգատելու առիթ մը կարող ըլլան գտնել :

Ամենէն աղէկն է մէկդի ընել բոլոր այս գանգատները և տրտունջները և սորվիլ շնորհակալ ըլլալ Աստուծոյ որ կու տայ «ամէն բարի տուրք ու ամէն կատարեալ պարգև :» Խորայեւացիք արանջեցին և գանգատեցան, ուստի կորսուեցան իրենց մեղքերուն մէջ, և եթէ մենք ալ արանջողներ և գանգատողներ ըլլանք, մենք ալ կրնանք կորսուիլ մեր յանցանքներուն և յիմարութիւններուն պատճառաւ :

Տէրը կ'ուզէ որ իր գաւակները երջանիկ ըլլան : Աղօթենք Աստուծոյ որ ազատէ մեզ բոլոր այս տրտունջներէն և գանգատներէն, և տայ մեզի այնպիսի սիրտեր որ սիրենք Տէրը, ծառայենք անոր և վախճանք անկէ :

ԵՂՁԵՐՈՒԻ ՁԱԳԸ


Անցած տարուան վերջերը պատանի մը կէս օրէ մը ետքը իր ետեւէն ցատկաւոր եղջերուի ձագ մը ունեւնալով ամենուն ուշադրութիւնը կը գրաւէր մինչ կ'անցնէր Ամերիկայի փորթընտ քաղաքին Հուայթ Հաուս

պողոտայէն : փոքրիկ կենդանին բուրովին ընտանի էր, և երբ ձիերը կը մտնէին այն, կը վախնար և կը վազէր պատանիին քով իր թէ պաշտպանութիւն կ'իյնտուերով : Պատանին ապահովագրութեան պաշտօնեայի մը, որ իր կնոջ հետ կառք նստած կ'անցնէր այն ճամբէն, պատմեց թէ ինչպէս ձեռք բերած էր եղջերուն ձագը : Ինք օր մը թուալէթին գետը ձուկ բռնելու գացած էր : Չուկը շատ առատ էր, և ինք բոլոր ուշադրութիւնը ձկնորսութեան գործին տուած էր և չէր իմանար թէ ինչ կ'անցնէր կը դառնար իր բողոտիքը : Բիշ մը վերէն մայելու ձայն մը կու գար, բայց տղան խելքը միտքը ձուկերուն տուած ըլլալով՝ մտադրութիւն չէր ընել, և լսած ձայնը մերժած գառնուկի մը ձայնը կարծեց : Մայելու ձայնը քանի մը անգամ կըրկնուեցաւ, սակայն տղան գլուխը վեր չէր առնել և շուրջը չէր նայեր : Յետոյ սմբակներու թեթև ձայն մը լսեց որ դէպ ի գետը կու գար և իր ձեռքին վրայ զգաց փոքրիկ պաղ քիթի մը հպումը : Տղան երբ վար նայեցաւ, տեսաւ որ եղջերուի ձագ մը կայնէր էր իր քովը առանց վախնալու, և իր խոշոր թուխ աչքերը անկած էր իր թէ օգնութիւն հայցելով : Իր պարանոցը և գլխուն մէկ կողմը շաղախուած էին արեւնով որ տակաւին թաց էր, իր նուրբ և փափուկ սրունքները դժուարաւ կրնային վերցնել տկարացած մարմինը :

Պատանին առաջին կարծիքն այն եղաւ թէ փոքրիկ կենդանին վիրաւորուած էր, և դէպ ի շուրջը վազելու ջանացած միջոցին գետեզերքը եկած էր ուր ինք ձուկ կ'որսար, և որովհետեւ տկար ըլլալուն համար անկարող էր աւելի առաջ երթալ, իր քովը եկեր ինկեր էր գետին եզերքը : Վերցուց զանիկա, բազուկներուն վրայ առաւ, յետոյ ջուրին մէջ լուաց անոր պարանոցի արեւը, և տեսաւ որ կենդանին զնաս մը չէր եղած :

Մայր եղջերուն զարնուած էր որ սորդէ մը, և իր սպառող դժը հաւաքելով, ետ դէպ ի անտառը քաշուած էր իր ձագին քով հասնելու համար զոր գետ քանի մը օր առաջ ծնած էր : Չագը յայտնի կ'երևնար թէ սարսափած և վազած էր իր հայրը գտնելու համար գետին քովերը ուր իր ապրած քանի մը օրերուն մէջ երկուքը ջուր խմելու կու գային գիշերները :

Տղան, փրանք Հէրիսըն, եղջերուն ձագը տուն տարաւ, ուր մանկիկ եղբայր մը ունէր կաթնիկեր, և Տիկին Հէրիսըն հիմա իր մանկիկին հետ կը մեծցնէ որբացած եղջերուն ալ : Եւ մը մը չանցած եղջերուն ձագը վարժուեցաւ : Նոր բնակարանին, և կատարելապէս ընտանեցաւ : Իսկոյն յարեցաւ փրանքին, զանիկա ճանչնալով իր բընական պաշտպանը, և հիմա պատանին ուր որ երթայ, եղջերուն ձագն ալ ետևէն կ'երթայ :



Ա. Կ. Ն. Ա. Ն. Ի. — ԲԱՐՈՉ ՄՐ

(Պատ. Բ. Թ. Բ. Բ.)

«Ակնվանի պէս պայծառ» Յայտ. Ի. Բ. 1 :

Շէյքսպիր կ'ըսէ թէ քարոզներ կան քարերու մէջ : Կը հաւատամ ատոր, և կ'առաջադրեմ առնել այս ակնվանին, և տեսնել թէ քարոզներ չեն գտնուիր անոր մէջ մեր տղոցը համար : Ակնվանի կամ բիւրեղ հինգ տեղ կը յիշուի Աստուածաշունչին մէջ : Երեք անգամ կը գործածուի Յայտնութեան գիրքին մէջ, երկնից նկարագրութիւնն եղած տեսնել :

Երբ ուրիշներու կը նկարագրենք այնպիսի բաներ զորոնք չեն տեսած, կը բազդատենք այնպիսի բաներու հետ զորոնք տեսած են : Օրինակի համար, երբ կ'ուզենք բարձր լեռներ նկարագրել այնպիսիներու՝ որոնք միշտ դաշտերու վրայ բնակած են, կրնանք ըսել թէ անոնք հեռուէն ամպերու պէս կ'երևնան, թէ անոնց քովերը շատ անգամ շատ զառի վեր կ'ըլլան և շատ մը իրարու վրայ դրուած մը կ'իլիթի աշտարակներէն աւելի բարձր են :

Յովհաննէս առաքեալ երկնից տեսիլքը տեսաւ, և իրեն ըսուեցաւ որ գրէ զանիկա գիրքի մը մէջ, որպէս զի Աստուծոյ այս աշխարհի մէջ ունեցած ժողովուրդը քիչ մը գաղափար ստանայ այն բնակարանին գեղեցկութեան և փառքին վրայ, ուր հասնելու համար կը ճամբորդեն : Ուստի երկինքը կը բազդատէ գեղեցիկ և թանկագին բաներու հետ :


Առաքեալը Մուրբ Գաղաքը նկարագրելու ատեն կ'ըսէ թէ անիկա մաքուր ոսկիէ շինուած է, թէ անոր տասներկու դռներէն ամէն մէկը մէյնէկ ամբողջ մարդարիտ է, և թէ քաղաքին տասներկու հիմերէն ամէն մէկը թանկագին քարէ է, և այդ տասներկու քարերուն անունները կու տայ : Կ'ըսէ նաև թէ տեսայ «Աթոռին առջևը իբրև ապակեղէն ծով մը

ակնվանի նման» : Կ'ըսէ թէ Նոր Երուսաղեմին «լուսաւորութիւնը խիստ պատուական քարի նման է, ակնվանի երեւոյթով յասպիս քարի պէս» : Յետոյ կ'ըսէ թէ իրեն ջուլուեցաւ «կենաց ջուրի գետ մը ակնվանի պէս պայծառ, որ կ'ըլլէր Աստուծոյ ու Գառնուկին աթոռէն» : Ապակեղէն ծով, լոյս և ջուր ամէնքն ալ ակնվանի պէս պայծառ : Ուրեմն ինչ գեղեցիկ, ինչ շողողուն ակնվանի տեղ մը ըլլալու է ան : Ես կը փափաքեմ հոն երթալ : Դուք ալ կը փափաքեք, այնպէս չէ :

Բայց Յովհաննէս կ'ըսէ Յայտնութեան գիրքին մէջ, թէ անկարելի է մտնել այդ տեղը ունէ մէկուն կամ ունէ բանի որ անմաքուր է, կամ ունէ մէկուն որ չարութիւն կը գործէ կամ սուտ կը խօսի : Միայն անոնք որոնց անունները Գառնուկին կենաց գիրքին մէջ գրուած են և որոնք անոր պատուիրանները կը կատարեն, իշխանութիւն ունին կենաց Ծառին վրայ : Բոլոր ասոնք կրնան դռներէն ուղղակի ներս մտնել : «Բայց դուրս պիտի մնան շունները ու կախարդները և պոռնիկները ու սպանութիւնը և նոյնները ու կուսակալները ու անամէնը որ ստութիւն կը սիրէ ու կ'ընէ» :

Ակնվանի կամ բիւրեղ ելած է բառէ մը որ սառ կը նշանակէ : Երբ ասիկ հաղար տարի առաջ, առաջին անգամ գտնուեցան վանաքարի կտորներ, մարդիկ կարծեցին թէ տեսակ մը շատ կարծր սառ են և անոնց տուին սառ նշանակող անուն : Հիմա չափակցական ունէ ձևով հանքային նիւթ՝ բիւրեղ կը կոչուի :

Կան բիւրեղներ որ անթափանցիկ են, այսինքն լոյս չեն անցնել իրենց մէջէն : Կան որ աղօտ երեւոյթ ունին, և կան որ յստակ են ջինջ ապակիի պէս : Մեր բնաբանը ամենէն մաքուր և յստակ բիւրեղի վրայ կը խօսի : Ուրիշ քարոզներու մէջ նորէն պիտի քննենք զանիկա և պիտի ջանանք սորվիլ անոր մեզի տուած ուրիշ դասերն ալ :

Ամերիկայի Միտիոնարաց
Արտօնատէր
Տնօրէն—Խմբագիր
Ֆինանսըլար Երգու

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱՌՈՒ ԳՕԾԱՅԵԱՆ